



Հակոբ Պարոնյան

Ազգային շոշեր

ԵՐԱՆՈՒՅԻ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Երանուհի Գարագաշեան, դերասանուհի, ծնաւ Իճատիէ, իր հաշուով՝ 1859-ին, իմ հաշուով՝ 1851 դեկտեմբեր 4-ին:

Երանուհին լոյս ընծայուելուն պէս, թաթիկներով սկսաւ ձեռք ընել: Վեց-եօթ ամսու եղած չեղած, ոտքի ելաւ եւ քալել սկսաւ: Մէյ մը ասդին, մէյ մը անդին վազելովը, ձեռքն ինկածը կոտրելով թափելովը, բարձր ձայնով պոռալովը, իսկոյն յայտնեց, թէ դերասանութեան մեծ յարմարութիւն ունի:

1856-ին թաղին վարժարանը դրկուեցաւ, ուր լմնցուց Երանուհին իւր քերականը, հեգարանը, Սաղմոսը, Գործ առաքելոցը ու Նարեկը, ու 1862-ին վարժարանէն ելաւ:

1865-ին երբ Վարդովեան Էֆենտին ոտքի ամանները ձեռքը բռնած փողոցէ փողոց, թաղէ թաղ կը վազէր դերասանուհի գտնելու համար այն ատենները դերասանուհի մը գտնելը հիմա հայերէն ներկայացումներուն թատրոնի մէջ հանդիսական գտնելէն աւելի դժուար էր եւ Էսքիլեր ալըրըմ պոռացող հրէաներու նման, ամէն դուռ կը զարնէր ու «դերասանուհի մը ունի՞ք մի» կը հարցունէր, դիպուածով Գարագաշեանին դուռը զարկաւ, ներս մտաւ եւ իրեն յատուկ համոզելու եղանակը ձեռք առնելով համոզեց ծնողքը, թէ աղջիկնին դերասանութեան տան, թէ ասով ազգին մեծ ծառայութիւն պիտի ընեն, թէ աղջիկներուն ապագան շատ աղէկ պիտի ըլլայ, թէ մեծ ապագայ մը կը սպասէ աղջիկներուն եւ թէ ապագան շատ չսպասեր, կ'երթայ, եւ թէ վերջապէս

Երանուհին պետք է դերասանուհի ըլլայ:

Երանուհին դերասանուհի բառն լսելուն պէս՝ նոյնը զգաց, ինչ որ կը զգայ տղայ մը, երբ իրեն ըսես, թէ քեզի շաքար բերի, կամ ինչ որ կը զգայ աղջիկ մը, երբ իրեն ըսես. ել, քեզի պալո տանիմ, բայց կ'ըլլա՞յ մը ըսելու քաշուելով՝ սա առարկութիւնն ըրաւ ես կ'ամչնամ տեսարան ելնելու այնչափ բազմութեան առջեւ. վնաս չունի, աղջիկս, պատասխանեց Վարդովեան Էֆենտին (այն ատեն պարոն), առջի անգամուն քիչ մը կ'ամչնաս, բայց կամաց կամաց կը վարժուիս. ես ալ առաջին անգամ տեսարան ելայ նէ՛ կ'ամչնայի, բայց հիմա, փառք Աստուծոյ ողորմութեան, ամենեւին չեն ամչնար, արձակ համարձակ կը խօսին:

Այս խօսքերէն շաբաթ մը ետքը, Երանուհին դերասանուհի ըլլալը որոշուեցաւ:

Երկու ամիս ետքը՝ օրիորդ Գարագաշեան Արեւելեան Թատրոնին մէջ ի տես ելաւ Աշխէնի դերով եւ այնչափ ճարտարութեամբ ներկայացուց, որ տիկին Արուսեակին նախանձը յուզեց քիչ մը: Հետզհետէ տրուած ներկայացումներուն մէջ միշտ սիրուիոյ դեր կատարելով՝ քիչ ժամանակի մէջ մեծ յառաջդիմութիւն ըրաւ: Տարի մը ետքը «Պօղոս եւ Վիրգինիա»-ի մէջ Պօղոսի մասն կատարեց, եւ սիրավառ պատանիի մը զգացմունքներն մանրամասնօրէն ցցուց իւր վրայ այնչափ վարպետութեամբ, որ հանդիսականներէն ոմանք ըսին, թէ եթէ օրիորդ Գարագաշեան արական սեռին վերաբերէր՝ բոլոր աղջիկներուն սիրտն իրեն պիտի գրաւէր:

Օրիորդ Գարագաշեան առանց խումբէն բաժնուելու՝ շարունակեց մինչեւ վերջը: Իրեն տրուած մասերը սիրով կ'ընդունի եւ սիրով կը կատարէ. մասն աղէկ կը սորվի եւ տեսարան ելնելուն պէս՝ բերանը բանալով յուշարարին չսպասեր, որ մասը կարդայ:

Այս վերջերս տեսնուեցաւ, որ երաժշտութեան մասին ալ յարմարութիւն ունի, ձայնը բնատրութեան պէս մեղմ է, եւ ունի այն ելեւէջներն, որ երգիչի մը պէտք են. «Գեղեցիկ Հեղինէ»-ի մէջ Հեղինէի դերը կը կատարէ, ունի Հեղինէին գեղեցկութիւնը, խօսուածքը, շարժուածքը ու բոլոր ձեւերն, սակայն անոր գօրաւոր ձայնն կատարելապէս չունի, եւ սակայն յուսալի է, որ այս մասին ալ քիչ մը ատեն վարժութիւն ընելով այդ պզտիկ թերութիւնն իւր ձայնին գեղգեղանքովը

ծածկէ:

Օրիորդ Գարագաշեանը դերասանուհոյ մը բոլոր հանգամանքներն ունի. միջին ու վայելուչ հասակով, սեւ աչքերով ու սեւ ընթրոհներով, երկար մազերով, ժպտալի եւ ձուածեւ դէմքով աղջիկ մըն է. եթէ դերասանական կեանքին մէջ պակասութիւն մը ունի՝ ան ալ սա է, որ տեսարան ելած ժամանակը միշտ այնպիսի դէմքով մը կ'ելնէ, որ կարծես թէ հոգաբարձու մ'է, որ վարժարան կը մտնէ, եւ կարծես, թէ տեսարան ելած ժամանակը հանդիսականները ոտքի չելլալնուն համար սրդողած է:

Ամէն հողմէ շշարժիր: Թատրոնի բեմին չափ լայն սիրտ մը ունի. եթէ մեռեալ մը տեսնէ՝ սիրտը թունդ չելներ, այլ աւելի կը մօտենայ գայն քննելու, որպէսզի տեսարանին վրայ մեռնիլ հարկ ըլլայ նէ՝ բնական մեռեալ մը ձեւանայ: Նոյնպէս եթէ մէկը բարկանայ՝ դիտմամբ աւելի կը բարկացնէ, որ բարկութեան ձեւերն ու շարժումներն աղէկ սորվի:

Այս փափաքով է, որ այսչափ առաջ գնաց, ինչպէս որ անով առաջ պիտի երթայ նաեւ ասկից վերջը ի պարձանս հայ թատրոնին: